ԱՄՓՈՓԱԹԵՐԹ-ՏԵՂԵԿԱՆՔ*

գնումների համակարգի բարեփոխումների վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայկական բիզնես կոալիցիայի կողմից ներկայացված առաջարկությունների քննարկման վերաբերյալ

N	Խնդրի		Եզրակացություն
	Նկարագրությունը	լուծման առաջարկությունը	
1	Պետական գնումների ոլորտում **մրցույթների ընթացակարգերի հրավերներում տեխնիկական բնութագրերի և այլ չափորոշիչների համապատասխանեցվում են կոնկրետ կազմակերպությունների համար՝ վերջիններիս հաղթանակն ապահովելու նպատակով,** որի արդյունքում մշտապես նույն կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումը: Որպես խնդրի լուծում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվեց "Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման կարգը հաստատելու մասին" ՀՀ կառավարության որոշման	Մշակել հիմնական տեխնիկական բնութագրերի ստանդարտներ	Ընդունվել է, առաջարկության հետ կապված պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով և 43-րդ կետի 1-ին ենթակետով

	նախագիծը, որն ընդունվեց 16.11.2017թ.-ին և ուժի մեջ մտավ 01.01.2018թ.-ին: Նշյալ որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը տրվեց ընտրանքային կարգով փորձաքննություն իրականացնելու իրավասություն՝ պատվիրատուների հաստատված գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջները մրցակցության ապահովման պահանջի պահպանման տեսանկյունից: Սակայն, հետագա ազդարարումները ցույց են տալիս, որ այս մեխանիզմի առկայության պարագայում էլ շարունակվում է տեխնիկական բնութագրերի կոնկրետ անձանց համար ձևավորման արատավոր պրակտիկան: Մասնավորապես ստացել ենք հետևյալ ահազանգները Բիզպաշտպան կայքի միջոցով՝ • Ազդարարը նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունն անձեռոցիկի գնման մրցույթում այնպես է կազմել հրավերը,		

	որպեսզի կոնկրետ մասնակից կարողանա հաղթել – ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/67 • Բժշկական պարագաների և ծախսվող նյութերի աճուրդներում տեղ են գտնվում միայն մեկ արտադրողի կողմից արտադրվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որը հնարավորություն չի տալիս այլ կազմակերպությունների մասնակցությունը աճուրդներին: Սա հատկանշական է հատկապես այն աճուրդներին, որոնք նախատեսված են վերակենդանացման, անեսթեզիոլոգիայի և վնասվածքաբանության-օրթոպեդիայի բաժանմունքներին: Օրինակ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդում չափաբաժինների 3-6-ը: • ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով աճուրդները հայտարարվել են		

	նույն տեխնիկական բնութագրերով, և միշտ հաղթող է ճանաչվել նույն ընկերությունը, մասնավորապես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26», «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/28» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդներում (177 չափաբաժին) տեղ են գտել մեկ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների տեխնիկական բնութագրեր՝ առանց որևէ փոփոխությունների: • 2019 թվականի մարտի 18-ին Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինություն պատվիրատուի կողմից հայտարարվել էր ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 19/4, ապա ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 19/6 մրցույթ, որը կարծում եմ կատարվել է ուղղորդված պատվերով՝ ՀՀ օրենքների և կառավարության որոշումների խախտումներով, մատնանշելով կոնկրետ ապրանքանիշը, ներկայացնելով նրա		

	տեխնիկական բնութագրերը, որոնք այնքան էլ չեն համապատասխանում ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 26 հոկտեմբերի 2006 թվականի N 1699-Ն որոշման պահանջներին, լիցենզիաների անհիմն պահանջները: Հայտը ներկայացնում եմ հույսով, որ հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում կբացառվեն նման ուղղորդված բնույթի, անիմաստ սահմանափակումներով մրցույթները, որոնց արդյունքում թեկուզ փոքր, սակայն լավագույն մասնագետներով համալրված կազմակերպությունները դուրս են մղվում շուկայից: • ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը հայտարարել է ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-19/42 ծածկագրով մրցույթ, որին մասնակցել է գործունեությունը ժամանակավոր դադարեցրած ընկերություն: Իրավունք ունի՞ արդյոք գործունեությունը ժամանակավոր		

	դադարեցրած ընկերությունը մասնակցել գնումների գործընթացին, եթե այո, ապա կխնդրեմ օրենքի հղումներ տրամադրել, որի համար շնորհակալ կլինեմ: Օրենքում կարծում եմ ճիշտ կլինի կարգավորվի այս հարցը: • Մեր ընկերությունը հանդիսանում է մանկական բակային խաղասարքեր, խաղահրապարակներ և մանկական սպորտային վարժասարքեր արտադրող մասնագիտացված ընկերություն, սակայն չի կարողանում մասնակցել հայտարարված մի շարք մրցույթի հրավերների, քանի որ մի դեպքում խաղասարքերի կառուցումն ու տեղադրումը ներառված է մի չափաբաժնում այգիների կառուցապատման այլ աշխատանքների հետ (օր.՝ շատրվանների կառուցում, կանաչապատում, ոռոգման և լուսային համակարգի տեղադրում և այլն), որը պահանջում է շինարարական լիցենզիա,		

	մյուս դեպքում պահանջվող լիցենզիային համապատասխան չափաբաժնի տեխնիկական բնութագրում օգտագործված են մեր խաղասարքերի նկարները, չափերը, բայց չափաբաժնում ներառված են այլ շինարական աշխատանքեր ևս, որոնց մենք, բնականաբար, չենք կարողանում մասնակցել: Այս խնդրի մասին, կոնկրետ մրցույթի վերաբերյալ դիմել ենք Երևանի քաղաքապետարան: Ի պատասխան այդ դիմումի, մեզ առաջարկել են կոնսորցիումի միջոցով մասնակցել մրցույթին: Այսուհանդերձ, մենք չկարողացանք գտնել շինարարի, ով կհամաձայներ մեզ հետ համատեղ գործունեության կարգով(կոնսորցիումով) մասնակցել մրցույթին: Արդյո՞ք չկա մրցակցային իրավունքների խախտում, շահերի բախման ռիսկ, գնումների հարմարեցում կամ այլ իրավունքների ոտնահարում: Ի՞նչ		

	կարող ենք անել, որպեսզի այսուհետ կարողանանք ձեռք բերել մեր մասնագիտական ոլորտին առնչվող մրցույթներին, գոնե, մասնակցության իրավունք: Հ.Գ Անհրաժեշտության դեպքում պատրաստակամ ենք ներկայացնել փաստեր և համագործակցել Ձեզ հետ:		
2	Պետական գնումների ոլորտում հայտարարված մրցույթների հրավերներում նշված որակական չափանիշները երբեմն լինում են առավել անորակ և չեն համապատասխանում շուկայում առկա նմանատիպ ապրանքների չափանիշներին: Բիզպաշտպանով ստացված գրությամբ ազդարարն անդրադարձել է տեխնիկական բնութագրերի հաստատմանը, մասնավորապես՝ ստանդարտացման խնդրին և ահազանգել է, որ պետական գնումների մրցույթներին մասնակցելու համար որոշ ապրանքներին ուղղված չափանիշները ավելի մեղմ են, քան խանութում վաճառելու համար անհրաժեշտ պահանջները,	Սահմանել ստանդարտներ, որոնք որակական տեսանկյունից կհամապատասխանեն շուկայում առկա ապրանքներին:	Չի ընդունվել, նկատի ունենալով, որ խնդրի կարգավորումը դուրս է գնումների մասին ՀՀ օրենսդրության կարգավորման դաշտից: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ոլորտային քաղաքականությունը մշակող մարմնի հետ քննարկման առարկա դարձնել նմանատիպ ապրանքների համար սահմանված ստանդարտների վերանայման հնարավորության հարցը

	ինչը պայմանավորված է ապրանքի ավելի էժան գներով և, արդյունքում, ավելի ցածր որակով: Օրինակ, որոշ ընկերություններ, որոնք մատակարարում են «Նարինե» պարունակող ապրանքատեսակ, որը խանութի չափանիշներին չի բավարարում, հաղթում են մրցույթում, քանի որ ավելի էժան գին են առաջարկել, որը մատակարարվում է մանկատներին և սննդի անվտանգության հետ կարող է խնդիրներ առաջանալ: Այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխանում ուղղակի նշվել է գնման առարկայի բնութագրերի բողոքարկման վերաբերյալ, և խնդրին լուծում չի տրվել:		
3	Երբեմն հանդիպում են դեպքեր, երբ ներկայացվում է ակնհայտ ոչ խելամիտ ցածր գնային առաջարկ:	Նախատեսել, որ ակնհայտ ցածր, ոչ խելամիտ գնային առաջարկ պարունակող հայտերը չեն դիտարկվում, անտեսվում են կամ մերժվում:	Ընդունվել է, առաջարկության հետ կապված պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ
4	Պետական գնումների հիմնական նպատակի հետ	Կազմակերպությունների կողմից	Գտնում ենք, որ առաջարկվող պայմանները

	մեկտեղ գնումների միջոցով կարելի է և պետք է փորձել լուծել պետական քաղաքականության այլ նպատակներ, քանի որ գնումները (պետական բյուջեում զգալի կազմելու ուժով) շատ արդյունավետ գործիք կարող են լինել տարբեր բնագավառներում պետական քաղաքականությունն իրականացնելու համար: Կորպորատիվ կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխանող կանոնագրքի ու կիրառումը, ինչպես նաև միջազգային ստանդարտներով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու հրապարակումը թափանցիկության և հաշվետվողականության ապահովման կարևորագույն միջոց են: Կառավարությունը դրանք համարում է առաջնահերթություն և ներկայումս իրականացվում են ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի վերանայված տարբերակի և հարակից օրենսդրական փոփոխությունների մշակման աշխատանքներ:	աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ հրապարակելը, կորպորատիվ կառավարման համակարգ ներդնելը, կորպորատիվ կառավարման տարեկան զեկույց հրապարակելը, հակակոռուպցիոն համապատասխանության ընթացակարգեր ներդնելը կարող են որպես էական գործոններ դիտարկվել վերը առաջարկված վարկանիշային համակարգում և այդպիսով կազդեն նաև հայտերի վերջնական գնահատման վրա (այսինքն՝ գնահատումը կլինի ոչ միայն գնային չափանիշով, այլ կներկայացնի որակական բազմագործոն գործընթաց):	ուղղակիորեն չեն փոխկապակցվում գնման ընթացակարգերի արդյունքում կնքվող պայմանագրի կատարման հետ, ուստի նման պահանջներ նախատեսելը կրելու է ձևական բնույթ և ուղղված է լինելու բացառապես գնումների համակարգի միջոցով լուծելու ֆինանսական շուկայի զարգացման խնդիրը: Առաջարկությունը կարող է հանգեցնել նաև մրցկացության աստիճանի նվազեցման: Պետք է նկատի ունենալ նաև, որ առկա կարգավորումների համաձայն հաղթող ճանաչվելու համար գինը համարվում է որոշիչ, բայց ոչ վերջնական գործոն: Հնարավոր է քննարկել առաջարկվող համակարգը ներդրված լինելու պայմաններում:

5	ՀՀ-ում ներդրված չէ գնումների մասնակիցների վարկանիշային և մոնիտորինգի համակարգ, և հաճախակի բնույթ են կրում պայմանագրերի կողմերի կողմից պարտավորությունների թերացումների կատարումը	Ներդնել գնումների մասնակիցների վարկանիշային և մոնիտորինգի համակարգ: Նախկինում ստանձնած պարտավորությունները թերացումներով կատարելը պետք է հանգեցնի վարկանիշի նվազեցման՝ ընդհուպ մինչև «սև ցուցակում» հայտնվելուն: Շարունակաբար պարտավորություններն անթերի կատարելը պետք է հանգեցնի վարկանիշի բարձրացման: Վարկանիշները կարող են հաշվի առնվել հայտերը գնահատելիս, ինչի արդյունքում գնահատումը չի սահմանափակվի միայն ֆինանսական՝ գնային ցուցանիշով: Անհրաժեշտ է սահմանել, որ որոշակի բարդության կամ կարևորության աշխատանքներ կարող են կատարվել միայն որոշակի **վարկանիշից** բարձր	Գործող կարգավորումներով ստանձնված պարտավորությունները չկատարող կամ ընթացակարգի փուլում ոչ արժանահավատ տվյալներ ներկայացնող մասնակիցների համար առաջին իսկ դեպքի ի հայտ գալու պարագայում նախատեսված է սև ցուցակում ներառելու պայմաններ, ինչը հանդիսանում է նաև ԵԱՏՄ պայմանագրով նախատեսված նախապայման: Միաժամանակ պայմանագրի կատարման ռիսկերը նվազեցնելու նպատակով ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով ներդրվել է որակի ապահովման երաշխիքի ինստիտուտը

		վարկանիշ ունեցողները (Օրինակ՝ Չեխիայում ասֆալտապատման աշխատանքների լիցենզիային համանման): Վարկանիշային համակարգի պարագայում հայտատուների կողմից ներկայացվող փաստաթղթերը չպետք է համարվեն ձևական, դրանց պետք է կարևորություն տրվի: Ոչ արժանահավատ, անհիմն, կեղծ տվյալներով հայտեր ներկայացնողների վարկանիշը պետք է համապատասխանաբար նվազեցվի՝ ընդհուպ «սև ցուցակում» ներառելով: Այդպիսի փաստաթղթերի, տվյալների թվին կարելի է դասել՝ փոխկապակցվածության կամ շահագրգռվածության առկայությունը կամ բացակայությունը, բավարար	

		ռեսուրսներ ունենալը և այլն:	
6	«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենսդրությամբ 2015 ապրիլի 1-ից պարտադիր է դարձվել 20 մլն. ՀՀ դրամը գերազանցող գնումների դեպքում գնման գործընթացները, ներառյալ պայմանագրերի կատարումը պատվիրատուների ներքին աուդիտի ստորաբաժանումների միջոցով աուդիտի ենթարկելու պահանջը: Մինչ այդ գործող կարգի համաձայն աուդիտն իրականացվում էր ընտրանքային կարգով:	Գնումների ոլորտում ներդնել և անցկացնել աուդիտ նաև 20 մլն. ՀՀ դրամը չգերազանցող գնումների դեպքում՝ ընտրանքային կարգով:	Առաջարկությունը կարգավորված է ՖՆ նախարարի 17/02/2012թ. N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 23.1 կետով, համաձայն որի աուդիտի ենթակա է 20 մլն. դրամը չգերազանցող գնումների առնվազն 30 տոկոսը
7	Առկա են թերություններ պետական գնումների պլանավորման գործընթացում, քանի որ բացակայում են գնային սահմանների՝ չափորոշիչները, ինչը հնարավորություն է տալիս ոչ նպատակային վատնել պետական բյուջեի միջոցները: Բացի այդ, հաճախակի բնույթ են կրում այն դեպքերը, երբ գնումների պլանները չեն արտացոլում իրական պետական կարիքները: Օրինակ, ծառայողական մեքենաները տրամադրվում են այն պետական	Սահմանել հստակ չափորոշիչներ և առավելագույն գներ պետության կարիքների համար ձեռք բերվող հիմնական ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար: Քանի որ գնումների պլանները կազմվում են բյուջեներով նախատեսված համապատասխան ցուցանիշների հիման վրա, կազմակերպել քննարկումներ	Իրականացվում է ՄԺԾԾ-ի և բյուջեի պլանավորման փուլում: Միաժամանակ էլեկտրոնային գնումների նոր ծրագրային ապահովման մշակման գործընթացում նախատեսվում է ներդնել նոր մոդուլ, որը հնարավորություն կտա ամբողջացնել ավտոմատ եղանակով տեղեկատվության հավաքագրման հնարավորություն: Միաժամանակ պետք է արձանագրել, որ ներկայումս armeps.am/ppcm հղումով համացանցում գործում է գնումների հաշվետվողականության ծրագիր, որը

	պաշտոնյաներին, որոնց գործունեության բնույթը նախատեսում է աշխատանք միայն գրասենյակից:	մասնագիտացված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրագրողների հետ բյուջեների պլանավորման փուլում:	շահագրգիռ անձանց տալիս է հնարավորություն ըստ պատվիրատուների իրականացնելու վերլուծություններ կատարված գնումների մասին, ներառյալ պլանավորված և կնքված պայմանագրերի գները

8	Որպես ոլորտային խնդիր շարունակում է մնալ տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը: Հաճախ գնումների մրցույթներին մասնակցելու պահանջները խիստ են և անմատչելի փոքր ձեռնարկատերերի համար, ինչն էլ սահմանափակում է ՓՄՁ-ների մասնակցությունը գնումների գործընթացին:	Նախաձեռնել դրամաշնորհային ծրագիր, որը կարող է ներառել գնումների ոլորտում կատարվող բոլոր մրցույթների, օրենսդրական փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներին պարզաբանումներ ներկայացնելու նպատակով պարբերաբար սեմինարների, կլոր սեղանների և խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում, իրականացվող ծառայությունների թափանցիկության բարձրացում՝ բուկլետների, թռուցիկների հրապարակում և այլն: Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում իրականացնել համապատասխան տեղեկատվական,	Ընդունելի է: Առաջարկվում է շահագրգիռ ՀԿ-ների և Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ քննարկել որոշակի ժամանակահատվածը մեկ նման միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունը՝ դրանում ընդգրկելով ներկայացուցիչներ Լիազորված մարմնից: Միաժամանակ գնումների գործընթացին մասնակցության իրազեկվածության աստիճանը բարձրացնելու նպատակով ՖՆ-ի կողմից պատրաստվել են համապատասխան անիմացիոն հոլովակներ, որոնք տեղադրված են procurement.am կայքում:

		խորհրդատվական և այլ անհրաժեշտ աջակցություն և օժանդակություն ՓՄՁ-ներին՝ գնումների գործընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման նպատակով:	

9	Իսպառ բացակայում է վիճակագրությունը այն մասին, թե հանրային գնումների մրցույթներին գերփոքր և փոքր ձեռնարկությունների որ տոկոսն է մասնակցել և մասնակիցների որ տոկոսն է հաղթել:	Կազմակերպել և իրականացնել համապատասխան վիճակագրության վարում, որը կարտացոլի ամբողջական և համապարփակ տվյալներ հանրային գնումների մրցույթներին մասնակցած և հաղթած ՓՄՁ-ների վերաբերյալ:	Էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների մասով է armeps.am/ppcm հղումով համացանցում գործում է գնումների հաշվետվողականության ծրագիր, որի միջոցով հնարավոր է ստանալ ամբողջական տեղեկատվության գնման գործընթացների մասնակիցների, այդ թվում հաղթողների և կնքված պայմանագրերի վերաբերյալ
10	ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների կարծիքով գնումների գործընթացին փոքր ձեռնարկությունների մասնակցության հարցում դեռևս առկա են խնդիրներ, որոնք վերաբերում են հիմնականում գնումներին մասնակցելու ընթացակարգերի բարդությանը և խոշոր ընկերությունների հետ մրցակցության դժվարություններին:	Մշակել և իրականացնել հանրային գնումների գործընթացներում փոքր ընկերությունների մասնակցության ապահովմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմներ, մասնավորապես՝ օրենսդրորեն սահմանել հանրային գնումների գործընթացին գերփոքր և փոքր ձեռնարկությունների մասնակցության հայտերի առկայության դեպքում ՓՄՁ-ների համար նվազագույն չափաբաժին (քվոտա): Մարզերում՝ նույն	Կարծում ենք, որ գնումների ապակենտրոնացված համակարգ ունենալու պարագայում լիարժեք ապահովված է առաջարկվող մոտեցումների կիրառման գործիքակազմը: Մասնավորապես ընթացակարգերը կազմակերպվում են ըստ վերջնական սպառման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների և այդ հանգամանքը ամբողջական հնարավորություն է ընձեռում նման սուբյեկտներին մասնակցելու գնման ընթացակարգերին: Ավելին, հայտերի գնահատումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների, մինչև 10 մլն. դրամ գնումների

		սկզբունքը կիրառել տեղական ՓՄՁ-ների մասնակցության դեպքում:	դեպքում որակի և պայմանագրի ապահովման երաշխիքները ներկայացվում են տուժանքի ձևով:

11	Այսօր առանց օրենսդրական որևէ կետ խախտելու, պետական գնումների ճանապարհով ձեռք են բերվում դեղեր, որոնք ներկրված են այնպիսի երկրներից, որտեղ չկան դեղերի որակի ապահովմանն ուղղված բավարար պայմաններ: Արդյունքում, հաճախ շուկայում հայտնվում և պետական գնումների միջոցով բնակչությանը տրամադրվում է դեղորայք, որը կամ չի բարելավում հիվանդի առողջական վիճակը, կամ էլ ավելի է վատթարացնում այն: Առողջապահության ոլորտում դեռևս հաստատված չեն հիվանդությունների դեղորայքային բուժման օպտիմալ սխեմաները, ինչը հնարավորություն կտար ձեռք բերել բուժման համար անհրաժեշտ որակյալ դեղորայքը ողջ տեսականիով: Դեղորայքի ձեռք բերման և գնումների կազմակերպման տիրույթում կարևոր խնդիր է հանդիսանում նախ դեղերի բաղադրության բոլոր տարրերի՝ այսինքն ինչպես ազդող նյութերի, այնպես էլ առկա օժանդակ նյութերի որակական հատկությունների և պատրաստման տեխնոլոգիայի	Դեղորայքի պետական գնումները դարձնել արդյունավետ ոչ միայն ծախսարդյունավետության տեսակետից, այլև դեղի տեխնիկական բնութագրում սահմանել դեղերի արդյունավետությանը, որակին և օժանդակ բաղադրիչներին վերաբերող լրացուցիչ պայմաններ, ինչը կբացառի անորակ դեղերի ձեռք բերումը: Մրցութային սկզբունքով դեղորայքի գնումներն իրականացնելիս առաջնահերթությունը տալ դեղորայքի որակական հատկանիշներին:	Կարծում ենք, որ խնդիրը հնարավոր չէ լուծել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նմանատիպ ապրանքների համար սահմանված ստանդարտների վերանայման հնարավորության հարցը, քանզի խնդիրը վերաբերում է բոլոր շահառուներին

	հետազոտությունը, այնպես էլ դեղորայքի գնումների կազմակերպման համար օրենքի բավարար պահանջների առկայությունը: Մինչդեռ ներկայումս դեղը գնելիս դրա օժանդակ բաղադրիչների, պատրաստման տեխնոլոգիայի կարևորությունը հաշվի չի առնվում, իսկ Գնումների մասին օրենսդրության միակ պարտադիր պահանջը տվյալ դեղի տեխնիկական բնութագրի առկայությունն է և դեղի գինը, ինչն էլ հանգեցնում է ոչ պատշաճ որակի կամ ցածրորակ դեղերի պետական գնումներին: Դեղերի գնման ժամանակ պետք է առաջնորդվել որակի և անվտանգության չափանիշներից՝ հիմնվելով բուժման արդյունավետության չափորոշիչի վրա:		

12	ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները»*: Գործնականում, համատեղ գործունեության պայմանագրով հաճախ հարկման հատուկ համակարգերում գործող կազմակերպությունները ցանկանում են մասնակցել որևէ ընթացակարգով մրցույթի, սակայն ընդհանուր հարկման դաշտ տեղափոխվելու ռիսկը բացասաբար է ազդում կազմակերպությունների կոնսորցիում կազմելու մտադրության վրա, և հետևաբար նվազեցնում է ընդհանուր գնման մրցակցությունն ու արդյունավետությունը:	«Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթում նախատեսել նաև փոփոխություններ «Հարկային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 254-րդ հոդվածում, մասնավորապես՝ ԱԱՀ վճարել միայն կոնկրետ մրցույթի շրջանակներում, դրանից հետո յուրաքանչյուր մասնակից կազմակերպություն վերադառնում է իր նախկին հարկատեսակին: Փոփոխության արդյունքում կվերանա շրջանառության հարկի համակարգում գործելու արգելքը՝ կոնսորցիում կազմելու պարագայում:	Առաջարկությունը վերաբերում է հարկային օրենսդրությանը և կարող է քննարկվել հարկային բնագավառում իրականացվող բարեփոխումների ենթատեքստում

13	Գնումների բողոքարկման կարգը կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով, որը նախատեսում է *յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:* Հարկ է անդրադառնալ **«յուրաքանչյուր անձ»** արտահայտությանը, քանի որ հաճախ տեղի են ունենում օրենսդրի կողմից ընձեռած նման լայն հնարավորության չարաշահումներ, երբ իրականացվում են բողոքարկումներ՝ ուղակի գնման գործընթացը կանգնեցնելու համար: Հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 04.04.2008 թվականի թիվ 747 որոշմամբ հաստատված դիրքորոշման համաձայն՝ *«…[**Յ]ուրաքանչյուր դեպքում անձն** իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ **ունի իրավական շահագրգռվածություն:*** Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել Սահմանադրական դատարանը	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածում նշված «յուրաքանչյուր անձ» բառակապակցությունը փոխարինել «շահագրգիռ անձ» բառակապակցությամբ: Շահագրգիռ է համարվում այն անձը, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են կամ կարող են խախտվել: Մասնագիտացված հասարակական կազմակերպություններին իրենց իրավասության տակ գտնվող ոլորտներում դիտել բողոք ներկայացնելու համար շահագրգիռ անձ և նախատեսել անձանց խախտված իրավունքների համար դատարան և (կամ) բողոքարկման խորհուրդ դիմելու իրավունքի իրացման հնարավորություն:	ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական ֆինանսանենրի կառավարման համակարգի բարեփոխումների ռազամավարությամբ նախատեսվում է ունենալ բողոքարկման միայն դատական համակարգ՝ սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման արագացված ընթացակարգ: Միաժամանակ ներկայումս գործող կարգավորումները (ՖՆ նախարարի 06/12/2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգ) հնարավորություն են ընձեռում հասարակական միավորներին որպես կողմ ներգրավվելու բողոքների քննության ընթացակարգին: Այսինքն ապահովված է ինչպես ՀԿ-ների կողմից բողոքներ ներկայացնելու, այնպես էլ բողոքի առկայության դեպքում որպես կողմ ներգրավվելու հնարավորություն

	նաև 07.09.2010 թվականի թիվ 906 որոշմամբ: Այս հարցի վերաբերյալ **միջազգային փորձի** ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **առկա են սակավ երկրներ, որտեղ օգտագործվում է «յուրաքանչյուր ոք» եզրույթը: Արտասահմանյան երկրների պրակտիկայում նկատվում է այն տենդենցը, որ բողոք բերելու իրավունք ունեն շահագրգիռ անձինք, ում իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օրինակ՝ Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Չեխիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Կիպրոսում:** Ընդ որում, օրինակ Բուլղարիայում, շահագրգիռ անձը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի անձի շահագրգռվածության առկայությունը կամ բացակայությունը՝ մրցակցության հանձնաժողովի կողմից նախապես մշակված փաստաթղթի հիման վրա, որտեղ սահմանված են շահագրգիռ անձ համարվելու համար անհրաժեշտ չափանիշները: Չեխիայում ցանկացած տնտեսվարող սուբյեկտ,		

	եթե գտնում է, որ գործարքի կնքմամբ խախտվում են իր իրավունքները, հնարավորություն ունի դիմել այդ մարմին: Այս դեպքում առարկություններ առաջադրած անձը պարտավոր է նախ իր պատճառաբանված առարկությունները ներկայացնել մյուս կողմին և համաձայնության չգալու դեպքում միայն կարող է դիմել բողոքարկման: Իսկ, օրինակ, Գերմանիայում, բողոք ներկայացնելու իրավունք ունեն այն գործարարները, որոնք, թեև չեն համարվում գործարքի մասնակից, բայց որոնց օրինական շահերը կարող էին վտանգվել հնարավոր խախտման արդյունքում: Նախքան բողոքարկելը հայցվորը պարտավոր է տեղյակ պահել պայմանավորվող կողմերին իր բողոքարկելու ցանկության վերաբերյալ: **Որոշ երկրներում «շահագրգիռ անձ» եզրույթը ներառում է այդ անձանց մեջ նաև մասնագիտացված հասարակական կազմակերպություններին:** Հարկ է նկատել, որ այն երկրներում, որտեղ հասարակական		

	մասնագիտացված կազմակերպություններին վերապահված է հնարավորություն մասնակցել գնումների բողոքարկման գործընթացին, նկատվում է բողոքարկման խորհրդի գործունեության առավել արդյունավետ և արդարացի համակարգ: Այդպիսի երկրների շարքին են դասվում **Բուլղարիան, Սլովենիան, Ավստրիան, Չեխիան**: Բուլղարիայում գնումների բողոքարկման ոլորտում մեծ դեր է վերապահված մասնագիտացված կազմակերպություններին և ասոցիացիաներին, որոնք 2012 թվականից ի վեր կարող են հայցադիմում ներկայացնել դատարան՝ իրենց անդամների շահերի պաշտպանությամբ: Չեխիայում գործում են ավելի քան 20 հակակոռուպցիոն ՀԿ-ներ, որոնք 2012 թվականից ստանալով բողոքարկման իրավունք՝ ավելի մեծ ազդեցություն ունեցան կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:		
14	**Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքարկման խորհրդի անկախությունն ապահովող հիմնարար**	Գնումների բողոքարկման խորհրդի անկախությունը ապահովելու համար վերանայել վերջինիս	ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական ֆինանսանենրի կառավարման համակարգի բարեփոխումների

	գործոնն է բողոքարկման խորհրդի առանձնացվածությունը պետական այլ մարմիններից և դրա կազմավորման կարգը: Ընդհանուր առմամբ, երկրների մեծամասնությունում բողոքարկման իրավասու մարմինները նշանակովի մարմիններ են, սակայն կան նաև ընտրովի մոդելներ, օրինակ՝ Սլովենիա: **Բացի այդ, որոշ երկրներում ընդհանրապես բացակայում է հատուկ մարմին, և փոխարենը գործի քննությունն իրականացվում է դատարանների կողմից, օրինակ՝ Բուլղարիա, Ավստրիա, Միացյալ Թագավորություն** (Գերագույն դատարան): Ինչպես երևում է «Գնումների մասին» գործող օրենքի 47-րդ հոդվածի վերլուծությունից, **էականորեն փոխվել է բողոքարկման խորհրդի կազմավորման կարգը:** Այսպես, եթե նախկինում Խորհրդի անդամների կազմում էին ներկայացուցիչներ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմիններից, ՀՀ քաղաքային	կարգավիճակը և այն առանձնացնել ՀՀ ֆինանսների նախարարությունից:	ռազամավարությամբ նախատեսվում է ունենալ բողոքարկման միայն դատական համակարգ՝ սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման արագացված ընթացակարգ
		Վերանայել գնումների բողոքարկման խորհրդի կազմավորման կարգը՝ դիտարկելով վերջինիս ընտրովի մարմին դառնալու նպատակահարմարությունը:	
		Սահմանել գնումների բողոքարկման խորհրդի վարձատրություն՝ ՀՀ պետական բյուջեի առանձին տողով:	
		Գնումների բողոքարկման խորհրդին տրամադրել աշխատակազմ:	

	համայնքներից, ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ-ում գրանցված և լիազորված մարմին գրավոր դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից (միավորումներից), ապա ներկայումս՝ Խորհրդի անդամները նշանակվում են ՀՀ նախագահի կողմից՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ: **Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ցանկացած մարմնի անկախությունն ապահովող գործոնների թվին են պատկանում նաև առանձին տողով պետական բյուջեից ֆինանսավորում ստանալը և սեփական աշխատակազմով հանդես գալու հնարավորությունը:**		
15	**Օրենսդրական փոփոխությունների արդյունքում էականորեն փոխվել է բողոքարկման խորհրդի անդամների կազմը և գործերի քննության կարգը:** Նախկինում այն բաղկացած էր **56 անդամից**, որոնց շարքում էին ներկայացուցիչներ տարբեր նախարարություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից,	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան փոփոխություն կատարել, համաձայն որի՝ բողոքարկման խորհուրդը բաղկացած կլինի առնվազն երեք անդամից:	

	ոլորտային գերատեսչություններից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և այլն[1]: Ներկայումս, խորհրդի անդամ կարող են հանդիսանալ **մինչև 3 հոգի**, որոնք ունեն տնտեսագիտության (էկոնոմիկա) և կառավարման (մենեջմենտ) կամ իրավագիտության մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն: Ավելին, նոր կարգավորումներով, գնումների գործընթացի վերաբերյալ բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից՝ **միանձնյա** անգամ այն դեպքում, երբ խորհուրդը բաղկացած լինի 3 անդամից: Կարծում ենք, բողոքի քննումը մեկ անձի կողմից կարող է կոռուպցիոն ռիսկերի վտանգ առաջացնել, իսկ առավել կարևոր նշանակություն ունեցող գնումների դեպքում կարող է լրջորեն վտանգվել պետության և հանրության շահը: Դժվար է նաև պատկերացնել, թե ինչպես խորհրդի անդամը, հանդես գալով միանձնյա, լինելով կամ իրավաբան, կամ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում համապատասխան փոփոխություն կատարել, համաձայն որի՝ բողոքները կքննվեն կոլեգիալ՝ բոլոր անդամների մասնակցությամբ, և որոշումները կկայացվեն խորհրդի կողմից բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ:	

[1]Տե՛ս Բողոքարկման խորհրդի նախկին անդամների ցանկը այստեղ՝ http://gnumner.am/am/category/194/1.html:

	տնտեսագետ, կարողանա լինել արհեստավարժ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում և ապահովել գնումների բողոքարկման գործընթացի մրցակցային,		
	թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը: Այժմ, ներկայացնենք **միջազգային փորձի վերլուծությունն** այս հարցի վերաբերյալ. **ԵՄ մի շարք երկրներում, օրինակ՝ Բուլղարիայում, Կիպրոսում, Չեխիայում, Սլովենիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Մալթայում, գործում է բողոքների քննման կոլեգիալ կարգ: Բուլղարիայում** գործում է մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որը բաղկացած է 7 անդամից, որոնք բողոքը քննում և որոշում են կայացնում ձայների մեծամասնությամբ: **Սլովենիայում** գնումների բողոքարկման իրավասու մարմինը՝ պետական վերահսկողական կոմիտեն բաղկացած է 5 անդամից, իսկ բողոքների քննությունն իրականացվում է կոլեգիալ: **Կիպրոսում** գնումների բողոքարկման	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ որպես գնումների ոլորտի քաղաքականություն իրականացնող մարմնի, մշակել տարբեր մասնագիտական փորձառություն ունեցող քաղաքացիական և բիզնես կազմակերպությունների տվյալների բազա, որոնցում ընդգրկված կառույցներին ներգրավել գնումների բողոքների քննման գործընթացին՝ խորհրդակցական ձայնով կամ մասնագիտական կարծիք տրամադրելու միտումով:	

	իրավասու մարմինը բաղկացած է 4 անդամից և նախագահից, և բողոքները քննում են նույնպես կոլեգիալ: **Գերմանիայում** գործում է բողոքարկման երկու աստիճանակարգ՝ պետական և ֆեդերալ մակարդակով: Պետական գնումների պալատում հաշվվում է 10 անդամ (դաշնային մակարդակ), իսկ Լանդերում՝ (տարածաշրջանային մակարդակ)՝ 9 անդամ: Բողոքների քննության կարգը երկու դեպքում էլ կոլեգիալ է: **Մալթայում** գործում է Գործարքների բաժանմունք, որի գործառույթներից մեկն էլ վերահսկողությունն է գնումների ոլորտում: Այն իր մեջ ներառում է շուրջ 40 անդամ: Բողոքների քննության կարգը կրկին կոլեգիալ է: **Իռլանդիայում** գնումների բողոքարկման իրավասու մարմինը բաղկացած է 12 անդամից: Այն երկրներում, որտեղ բողոքների քննությունը իրականացվում է դատարանների կողմից, կրկին գործում է կոլեգիալ կազմ, օրինակ՝ **Ավստրիայում** Վարչական, իսկ **Կիպրոսում**՝ Վճռաբեկ դատարանի կողմից:		

	Բացի այդ, շատ կարևոր է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը որոշակի ձևաչափով նշված խորհրդում: Այն մի կողմից, կթեթևացնի խորհրդի ծանրաբեռնվածությունը և կապահովի կայացվող որոշումների ողջամիտ ժամկետները, դրանց օբյեկտիվություն ու հիմնավորվածությունը, մյուս կողմից, կբարձրացնի բողոքարկման գործընթացի նկատմամբ հանրային վստահությունը:		
16	Բողոքարկման խորհրդին անհարկի ծանրաբեռնելուց խուսափելու նպատակով միջազգային փորձում առկա է հետևյալ պրակտիկան. Շահագրգիռ անձի կողմից իրավունքների խախտում հայտնաբերելու դեպքում վերջինս պետք է իր առարկություններն ու դիտողությունները ներկայացնի գործարքի կողմին: Վերջինիս կողմից օրենքով նախատեսված ժամկետում պատասխան չներկայացնելու կամ նույն ժամկետում համաձայնության չգալու դեպքում միայն անձը կարող է դիմել բողոքարկման խորհուրդ կամ	ՀՀ ներպետական օրենսդրական համակարգ ներմուծել բողոքների և առարկությունների քննման նշյալ մեխանիզմը:	Կարծում ենք, որ նման պրակտիկայի ներդրումը երկարաձգելու է գման ընթացակարգերի կազմակերպման ժամկետները և չի ունենալու էական ազդեցություն: Տվյալ դեպքում յուրաքանչյուր պատվիրատուի աշխատակազմում սահմանված է որակավորված գնումների համակարգող, որը չունի գնահատող հանձնաժողովի անդամի կարգավիճակ, հանդես է գալիս որպես քարտուղար և հետևում է ինչպես պատվիրատուի, այնպես էլ հանձնաժողովի կողմից գործողությունները օրենսդրությանը համապատասխան իրականացնելուն:

	դատարան:		Միաժամանակ այդ իրավունքի իրացման համար սահմանված են համապատասխան կարգավորումներ, կայացվող որոշումների համար պատասխանատվություն
17	Գործնականում հաճախակի բնույթ են կրում այնպիսի իրավիճակներ, երբ գնումների համակարգողը կատարում է նաև պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի գործառույթները, իսկ վերջիններս՝ միայն ստորագրում են նշյալ փաստաթղթերը՝ ընդհանրապես պատկերացում չունենալով գնման գործընթացներից:	Առաջարկվում է պարբերաբար վերապատրաստել ոչ միայն գնումների համակարգողներին, այլ՝ պատասխանատու ստորաբաժանումների և գնահատող հանձնաժողովների անդամներին ևս: Սույն առաջարկի անհնարինության դեպքում միայն առաջարկվում է ներդնել գնումների համակարգողների վերապատրաստման նոր մոդուլ՝ վերապատրաստողների վերապատրաստում (ToT), երբ գնումների համակարգողը պարտականություն կունենա վերապատրաստվելուց հետո վերապատրաստել	Ընդունելի է:

		պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի անդամներին	
18	ՀՀ կառավարության N 390-Ն որոշման համաձայն՝ *գնումների միասնական անվանացանկը կազմված է ութ նիշ ունեցող թվային ծածկագրից, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման հետ: Թվային ծածկագիրն ունի չորս մակարդակ: Ընդ որում՝ երկրորդ մակարդակը՝ խումբը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000): Գնումների պլանում գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է: Գնումների միասնական անվանացանկի բացվածքը, ըստ թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի խմբերի, դասերի և դասակարգիչների, սահմանվում է Հայաստանի*	Վերանայել գնումների միասնական անվանացանկը: Առաջին ենթախնդիրը լուծելու նպատակով կարելի է դիմել բոլոր գնումների համակարգողներին՝ անվանացանկի հետ աշխատելիս նման խնդիրներ ունենալու դեպքում այդ մասին բարձրաձայնելու նպատակով:	Բազմաթիվ անգամ ՖԵՆ-ն դիմել է պատվիրատուներին CPV կոդերը վերանայելու առաջարկներ ստանալու ակնկալիքով: Ստացված առաջարկությունները դարձել են քննարկման առարկա և ընդունելի համարվելու դեպքում կատարվել են փոփոխություններ: Առաջարկությունը կոնկրետացվելու դեպքում դրանք պարտադիր կդառնան քննարկման առարկա

	Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերի թվին է պատկանում մեկ անձից գնումը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ *գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը,* այն է՝ մեկ միլիոն ՀՀ դրամ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նշյալ անվանացանկը կիրառելիս առաջանում են երկու խումբ խնդիրներ, մասնավորապես՝ • Որոշ դեպքերում միմյանց հետ աղերսներ չունեցող ապրանքներ գտնվում են նույն խմբում, և եթե նույն խմբում գտնվող երկու ապրանքի մասով անհրաժեշտ է կնքել մեկ անձից գնման ընթացակարգով մինչև 1 միլիոն դրամի պայմանագիր, ապա 1 միլիոնի սահմանը հատելուց անհրաժեշտ է օգտվել այլ գնման ընթացակարգից: • Հաճախակի բնույթ են կրում նաև		

	հակառակ տենդենցները, երբ ծածկագրերը հնարավորություն են տալիս արհեստականորեն գնումը բաժանել մի քանի չափաբաժինների, որոնք գտնվում են տարբեր խմբերում, և գնանշման հարցման դեպքում կիրառել մեկ անձից գնման ընթացակարգը, ինչը բերում է կոռուպցիոն ռիսկերի:		
19	Ծառայությունների մատուցման պայմանագրերը ևս հանդիսանում են գնման օրենսդրության առարկա, ինչը որոշ ոլորտներում առաջացնում է խնդիրներ: Օրինակ, թատրոններում ոչ բոլոր դերասանների հետ է շահավետ կնքել աշխատանքային պայմանագրեր, որովհետև նրանք հնարավոր է ոչ բոլոր ամիսներին մասնակցեն: Բացի այդ, աշխատանքային պայմանագրերը ծանրաբեռնում են վերջնահաշվարկ կատարելու պարտականությամբ: Տվյալ պարագայում, տրամաբանական է, որ պայմանագրերն անհրաժեշտ է կնքել մեկ անձի ընթացակարգով՝	Նախատեսել որոշակի բացառություններ նման առանձնահատուկ մոտեցում պահանջող ոլորտների համար՝ նախատեսելով, որ մեկ անձից գնման ընթացակարգ կարելի է կիրառել ոչ միայն հեղինակային և հարակից իրավունքների դեպքում, այլև՝ նշյալ իրավիճակներում:	Ընդունվել է, առաջարկության հետ կապված պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով

	կոնկրետ անձանց հետ՝ պայմանավորված վերջիններիս արտաքին և այլ տվյալներով: Մինչդեռ, ամբողջ տարվա կտրվածքով հնարավոր է կնքել միայն մինչև մեկ միլիոն դրամի պայմանագիր մեկ անձ ընթացակարգով մի շարք դերասանների հետ, որից հետո անհրաժեշտ է դիմել գնման այլ ընթացակարգերի կամ կնքել աշխատանքային պայմանագրեր, ինչի աննպատակահարմարության մասին վերը խոսվեց:		
20	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» դրույթներից բխում է, որ *եթե կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի կեսը և այն ենթակա է կատարման կնքման պահին, ապա գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ, և գործարքը կարող է կատարվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն)*	Նախատեսել հայտարարության հրապարակման առավել պարզեցված ձևեր նշյալ իրավիճակների համար:	Կարծում ենք, որ խնդիր տեխնիկական բնույթի է, քանզի պայմանագիրը ինքնին համարվում է գործարքի տեսակ: Այսինքն՝ հայտարարությունը վերաբերում է կնքված գործարքին:

	հիման վրա: Սակայն, օրենքով պահանջվում է հրապարակել կնքված պայմանագրի մասին հայտարարություն ՀՀ ֆինանսների նախարարության սահմանված ձևանմուշի վրա, որն, ի դեպ, չի կարելի փոփոխել: Փաստացի ստացում է մի իրավիճակ, երբ չկա պայմանագիր, սակայն անհրաժեշտ է վերջինիս մասին տեղեկատվություն լրացնել հայտարարության մեջ:		
21	Շատ հաճախ գնումների համակարգողները թերանում են իրենց գործառույթներն իրականացնելիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանց նկատմամբ չեն կիրառվում խիստ պատասխանատվության միջոցներ:	Սահմանել պատասխանատվության միջոցներ գնումների համակարգողների կողմից իրենց գործառույթները չիրականացնելու դեպքում, օրինակ՝ պայմանագրերը ժամկետներում չհրապարակելու և այլն:	Կարծում ենք, որ պատասխանատվության միջոցները չպետք է սահմանվել ՞Գնումների մասին՞ ՀՀ օրենքով: Միաժամանակ դրանք արդեն իսկ սահմանված են քաղաքացիական ծառայության օրենքով և քրեական օրենսգրքով: Կարծում ենք, որ տվյալ դեպքում պետք է ծրագրային ապահովումները կառուցվեն այնպիսի եղանակով, որոնք ավտոմատ եղանակով կապահովեն տեղեկատվության գեներացումը և հրապարակումը: Ներկայումս գործող ծրագիրը հնարավորինս ապահովում է այս խնդիրը, սակայն այն ունի բարելավման անհրաժեշտություն և հաշվի կառնվի նոր

			ծրագրային ապահովումը մշակելիս
22	Գնումների համակարգի նկատմամբ վերահսկողությունը նախատեսված են ՀՀ – ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, ԵՄ և Հայաստանի գործընկերության առաջնահերթություններով, ինչպես նաև՝ «Հայաստանի հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսական համաձայնագրով, որում սահմանվում է, *ի թիվս այլնի, մեկ անձից գնումների կատարման ընթացակարգի օգտագործման նվազեցում:* Չնայած իրականացվող բարեփոխումներին, այնուամենայնիվ մի շարք Պատվիրատուներ նախընտրում են կիրառել մեկ անձից գնման ընթացակարգերը այն դեպքերում, երբ կարող են կիրառել մրցակցային ընթացակարգեր: Հաճախ նաև կիրառում են վերը նշված սխեման՝ շրջանցելով օրենքով նախատեսված մեկ միլիոնի շեմին վերաբերող պահանջը:	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ուժեղացնել վերահսկողական մեխանիզմները, միտված հենց մեկ անձից գնումներ կատարելու ընթացակարգերի չարաշահումների վերհանմանը:	Գնման ընթացակարգերի կազմակերպման մասին տեղեկատվությունը ամբողջապես հրապարակային է և տեղեկատվության առկայությունը շահարգիռ մարմիններին հնարավորություն է տալիս ամբողջապես գնահատել իրականացված գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանությունը: ՖՆ-ի կողմից վերահսկողությունն իրականացվում է բյուջեի կատարման հսկողության գործընթացի շրջանակում:
		Վերապատրաստել մասնագիտական քաղաքացիական հասարակության և լրագրողական համայնքների ներկայացուցիչներին, որպեսզի վերջիններս կարողանան ևս վերհանեն նշյալ չարաշահումները: Սա ևս կարելի է անել վերը առաջարկված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Նշյալ	Ընդունելի է, լրագրողների համար նման միջոցառում կազմակերպվել է 2019թ. դեկտեմբեր ամսին

		չարաշահումներն իրականացվում են հենց գնումների պլանների կազմման փուլում, ինչն էլ բխում է բյուջետային պլանավորումից, ուստի այստեղ ևս կիրառելի է բյուջեների պլանավորման փուլում մասնագիտացված քաղաքացիական հասարակության և լրագրողական համայնքի հետ քննարկումներ անցկացնելու առաջարկը:	
23	Տեղեկագրում որոնման համակարգը անհարմար է ինչ որ կազմակերպության հայտարարած X ծածկագրով ընթացակարգը գտնելու համար:	Որոնումը կատարել ըստ պատվիրատուի անվան:	Տեղեկագիրն ունի պատվիրատուի անվամբ որոնում կատարելու հնարավորություն: Միաժամանակ համապատասխան առաջարկությունների հիման վրա հնարավոր է քննարկել տեղեկագրում ֆիլտրման հնարավորությունները մեծացնելու հարցը
24	Երկու փուլով փաստաթղթերի ներկայացումը ստեղծում է անհարկի ծանրաբեռնվածություն բիզնեսի համար:	Գնանշման հարցման դեպքում հայտերի մեջ միանգամից ներառել որակավորումը՝ հավելված 5-ի մեջ ներառվի նաև հավելված 6.1-ը:	Ընդունվել է, առաջարկության հետ կապված պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով